# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱԽՄԱՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

**Անժելա Քալոյան**

*Բանասիրական գիտությունների դոկտոր*

Ճշմարիտ է ասված՝ հանճարների, ինչպես եւ հերոսների մահը նման է արեւի մայրամուտի, մայրամուտին լուսատու աստղի, որ աղջամուղջին հայտնվելով հորիզոնի մյուս կողմում՝ հաջորդ արշալույսին նորից վեր է բարձրանում երկնակամարում՝ նոր փայլով ու գեղեցկությամբ:

Բարձրացել էր հողից, վերադարձավ հողին: Բարձրացել էր, ինչպես իր սիրած արեւն էր բարձրանում՝ հրեղեն, շենշող, շռայլորեն հուրհրատելով, փողփողալով: Դեպի մայրամուտ իջավ դարձյալ իր սիրած արեւի պես՝ դանդաղընթաց, մեղմ, բարի, հանդարտորեն բաշխվելով, սպառվելով, մարմրելով: Դեռ մանկությունից օդի, ջրի, արեւի հետ, մայրական խոսք ու օրորի, շրջապատի ձայների հետ Թումանյանը թափանցում է հայ մարդու հոգու մեջ եւ ինքն էլ մեծանում նրա հետ: Ամեն տարիքի հետ նա բացվում է նորովի: Ամեն տարիքի նույն բառ ու տողի մեջ գտնում է մինչ այդ չպեղած շերտեր, խորություններ եւ «մի կաթիլ մեղրը», որ մի ժամանակ իր քաղցրությամբ հրապուրված ճանճի տզզոցով այնքան հրճվանք էր բերում մանկական սրտին, տարեցտարի խտանում է, ծանրանում եւ հասուն տարիքի նույն այդ սիրտը լցնում է դառնությամբ, հանգեցնում համայնածավալ ընդհանրացումների:

Այսպես է Թումանյան բանաստեղծը, արձակագիրը: Եվ Թումանյանը, որ ինձ թվում էր մինչեւ վերջ հասկացված ու յուրացված, բացվում է նորովի, հոդվածից հոդված, ասույթից ասույթ իմ առջեւ գծվում, ձեւավորվում, բարձրանում է խորհող ու գործող Թումանյանը՝ Թումանյան քաղաքացին, էլ ավելի մեծ, քան կարծում էի, շատ ավելի այժմեական, քան կարող էի ենթադրել: Տաղանդը ժողովրդի հավաքականությամբ ստեղծվող հարստություն է, բազում մտքերի ու սրտերի հաղորդականությունից կուտակվող ոգեղեն ուժ, որ բնությունը դնում է այս կամ այն անհատի մեջ, արտահայտվում նրա միջոցով: Եվ որքան որեւէ ժողովուրդ ապրել է բուռն ու տագնապալից կյանքով, որքան նա ենթակա է եղել արտաքին ու ներքին բռնությունների, այնքան բուռն ու տագնապալից է եղել

նաեւ նրա գրականությունը, այնքան «փղոսկրյա աշտարակներից» իջած, կյանքի անդադրում ալեկոծումներին խառնված են եղել այդ գրականության նվիրյալները:

Հայ բազմադարյան պատմությունից շատ բարդ ու դժվարին մի հիսնամյակ բաժին ընկավ նրան. մի կողմից մթին նախապաշարումներով ու աղքատությամբ օրըստօրե քայքայվող հայկական գյուղը, մյուս կողմից՝ ազգային-քաղաքական կյանքի վայրիվերումները, 1895-96 թթ. համիդյան ջարդերը, դարասկզբի ընդհարումները Անդրկովկասում, եւ ապա 1915 թվականի ցեղասպանությունը: Նա ստեղծել է դարակազմիկ գրականություն: Նրա արվեստում խտացան գրական-մշակութային զարգացման բարձր ու լուսավոր ձգտումները, մարդուն կատարյալ տեսնելու երազանքը: Նա դարձավ մեր անցյալը, ներկան ու ապագան միմյանց կապող այն եզակի քառուղին, որը ոչ միայն ճամփաբաժան է, այլեւ ելակետ, սկիզբ, աղբյուր: Եվ հիրավի, Թումանյանի մեջ, ինչպես ժողովրդական էպոսի հերոսների մեջ, մշտապես ներկա է ժողովրդի հավաքականությունը, նրա խոսքն ու գործը ասես թելադրվում է այդ հավաքականության կողմից: Այստեղից էլ նրա՝ երեւույթների արտաքին կեղեւի տակից խորքը տեսնելու, պատմության ընթացքն ու տրամաբանությունը ըմբռնելու ահռելի զգացողությունը՝ հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, նրա պայծառ հավատը՝ դեպի մարդկությունը եւ նրա ապագան:

Բարդ ու հետաքրքրական են մտածող ու գեղագետ Թումանյանի ստեղծագործության փիլիսոփայական ատաղձը, աշխարհի ու բնության, պատմության, կեցության ու գոյի, մարդու էության գաղտնիքների բացահայտումները: «Հումանիզմի խորտակման», «մարդու օտարման», «քաղաքակրթության մայրամուտի» եւ այլ կանխատեսումներով ողողված այդ շիկացած դարաշրջանում գեղարվեստական գրականությունը դիմում էր սոցիալ-փիլիսոփայական, հոգեբանական-հոգեվերլուծական, քրիստոնեական-ավետարանական, ժառանգական-մարդախուզական, բարոյական-գեղագիտական եւ այլ դեղամիջոցների: Թումանյանի աշխարհայացքի որոնումները գիտակցվում են լայն կոորդինատների զուգահեռ հպումներով. «խղճի բարոյական կատարելագործման» զոլյական կենսաբանական դոմինանտ, կյանքի «ունայնություն», գոյության կռվի բնական օրենքի պատճառականություն, կամքի շոպենհաուերյան բացարձակություն, «բնական իրավունքի» ու «բնական մարդու» ռուսոյական տեսություն, գյոթեական բնապաշտություն:

Հայ իրականության մեջ հումանիստական շարժման դրոշակակիրը Թումանյանն էր՝ Գոյության, Բարձրի, Վեհի, կատարյալ Մարդու փիլիսոփայական-

մոնումենտալ արծարծումներով, եւ Վերնատունը՝ ժամանակի ականավոր դեմքերի՝ Աղայանի, Դեմիրճյանի, Իսահակյանի, Շանթի, Աղբալյանի եւ այլոց հարցասիրությունների, համապարփակ խոհերի եւ իմաստասիրական հղումներով: Պատահական չէ, որ համաշխարհային գրողներից Թումանյանին առավել սրտամոտ ու հարազատը Շեքսպիրն է, որը նրան գրավում էր իր համապարփակ լայնությամբ ու խորությամբ, «կյանքի ամենակողմանի ու խորին ըմբռնումով եւ հանճարեղ վերարտադրումով»: Շեքսպիրին անվանելով «դրամատիկական բանաստեղծության անտակ ու անեզր օվկիանոս»՝ Թումանյանն ընդգծում էր հատկապես նրա ստեղծագործության համամարդկային, հումանիստական բովանդակությունը, արժեւորում նրան՝ իբրեւ գեղարվեստական մեծության մի բարձրագույն իդեալի, որը դառնում է «մի չափ»[5] ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար. «Եվ ամեն մի գրող, ինչ ախարհքում էլ ասպարեզ իջնի, տեսնում է իր ուղին արդեն լուսավորված նրա շողերով»[6]:

Շեքսպիրի պես անեզր է նաեւ ինքը: Իր առաջին իսկ երկերում Թումանյանը ձգտում է հաստատել մարդու եւ բնության հավիտենական ներդաշնակության գաղափարը: Նրա բնափիլիսոփայության մեջ մարդը տիեզերքի մի հյուլեն է, բնության մի մասնիկը, որն ապրում է նույն բնության օրինաչափություններով եւ անմահանում է բնությանը ձուլվելու միջոցով: Կինը եւ սերը վճռական տեղ ու դեր ունեն Թումանյանի ստեղծագործություններում: Թումանյանի հերոսուհիների հույզերի աշխարհը չափազանց ուժեղ է, իսկ սերը մեծագույն հույզն է, որ նրանց մղում է անձնուրաց քայլերի, կամք ու վճռականություն պարգեւում: Սիրո կախարդական ուժով նրանք բարձրանում են առօրյա գորշությունից ու համակվում մարդկային բնության վսեմ գեղեցկությամբ: Կինը, որպես ֆենոմեն, Թումանյանի համար դառնում է մարդկային իդեալների խորհրդանիշ: Սա կնոջ ազատագրության ընդհանուր մտայնության յուրատեսակ արձագանք է: Թումանյանը կնոջը ներկայացնում է որպես կամային անձ՝ իր զգացմունքների ու կենսաբանական բնույթի ընտրությամբ եւ անհատական ինքնորոշման դրամատիկ պայքարում: Սա դժվարին անցում է, բարոյական ավանդակեցության հաղթահարում, որի համար ընդվզում են Թումանյանի հերոսուհիները: Հոգեբանական հանգույցների լուծումը կրկնություն կլիներ, եթե նույնարժեք լինեին մարդկային անհատականության բանաձեւերը: Յուրաքանչյուր կին երջանկության է ձգտում, բայց կյանքն ապրում է յուրովի՝ըստ իր կենցաղավարության ու հոգեզգացական բնույթի: Կնոջ ինքնուրույնության եւ ընտանեկան ազատության հարցերը, հոգե-

[5] Թումանյան Հ., *Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ*, հ.2, Երեւան, 1969, էջ 297:
[6] Թումանյան, *Երկերի Ժողովածու*, հ.4, Երեւան, 1951, է ջ 25:

ւոր-զգացական աշխարհի բռնկումները, բարքերի այլափոխության նորահայտ միտումները, որոնք բարձրացված էին դեռեւս 19-րդ դարի համաշխարհային գրականության մեջ (Ժորժ Սանդ, Շարլոտա Բրոնտե, Բալզակ, Ստենդալ, Ֆլոբեր, Մերիմե, Դիկենս, Մոպասան, Ուայլդ), ասպարեզ տալով ազատ եւ ինքնիշխան անհատի կենսաստեղծման ուտոպիային, արձագանք գտան նաեւ հայ գրականության մեջ՝ առաջադրելով երեւույթի սոցիալական, բարոյաբանական, կենսաբանական ու փիլիսոփայական առնչություններ:

Ֆլոբերից հետո, մարդու վարքագծի բացատրության համար, Զոլան դիմում է բնազդներին, ենթագիտակցությանը, խառնվածքի առանձնահատկություններին: Թումանյանի երկերը եւս քննում են կանանց խնդիրները գոյի իմացաբանական չափանիշներով՝ որոնց մեջ արժեւորվում են կնոջ հոգեբանության փիլիսոփայական հիմքերը. ի՞նչ արարչություն է կինը, ինչպե՞ս գտնել նրա հանելուկային էության բանալիները, ի՞նչ դեր ունեն նրա կյանքում վիշտը, տառապանքը, բռնությունները, աղքատությունը, երջանկության, սիրո բացակայությունը եւ այլն:

Ընդունելով այն դրույթը, թե «կինն է մարդկային ընկերության քաղաքակրթիչ տարրերից մեկը»[7], Ռաֆֆին իր բանախոսություններում քննական վերլուծության է ենթարկում հայ կնոջ իրավազրկության ընտանեկան, ավանդական-ազգային պատճառները, իսկ գավառական գրականությունը արձանագրում է, որ ավանդույթներով ու նահապետականությամբ կապանված գավառներում անմխիթար է հայուհու վիճակը: Թումանյանը եւս ավանդական կացութաձեւի լայն հենքի վրա է անդրադառնում կնոջ իրավազուրկ վիճակին, քննաբանում գեղջկական կենցաղի ցավոտ խնդիրները: Հայուհու գրական կերպավորումը ընդելուզված է սնոտիապաշտության ու նախապաշարումների քննադատությամբ: Անհուն գորովանքով է պատկերագրվում կնոջ յուրահատուկ աշխարհը՝ լի հույզերով, սիրազեղ զգացմունքներով, սիրելու եւ սիրվելու բաղձանքով, տգիտության ու այրերի քմայքների, միջավայրի ու կյանքի ծանր հարվածների տակ ճզմված, անհատականությունը եւ կամքն օտարած հայուհու ճակատագիրը: Գյուղաշխարհն իր սովորույթներով, բարքերով, առեղծվածային կյանքի բարդ հանգույցներով գրական կերպավորում է ստանում Թումանյանի երկերում: Դառը իրողությունների երփնագրումով պատկերվում են հայուհու գողգոթան ներկայացնող սրտառուչ ողբերգություններ, նշավակվում տգիտությունը, քարացած նահապետական սովորույթների եւ անհարկի միջամտությունների հետեւանքով խափանված երջանիկ միությունների փլուզումները, հոգեբանական նրբին

[7] Ռաֆֆի, ԵԺ, հ.9, Ե., 1964, էջ 378:

զննումներով բացահայտվում է հայուհու կյանքի խոր դրաման, հանուն սիրո եւ երջանկության նրա ոգորումները, պատկերագրվում է հակասությունների ու ցավերի մի լուռ աշխարհ, ուր մաքուր, ծաղկող հոգու պոեզիան աղարտվում է անողոք կամայականությամբ, որը եւ վերջակետվում է խորտակված կյանքի ողբերգությամբ:

Ըստ Զոհրապի՝ «կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի»[8]: Բակունցյան «լացի փոխված» ալպիական ծաղիկների կողքին կանգնում են թումանյանական սարի ծաղիկները՝ կանայք՝ «թաքուն ցավերով ու լուռ, որոնք տրորվում են ու թառամում, սրտները սեւ ու տխուր»: Փոքրիկ Մարոյի վաղաժամ, բռնի ամուսնությունը, հետո՝ փախուստը, հալածական վիճակը եւ ինքնասպանությունը կնոջ ողբերգական ճակատագրի խոսուն փաստարկներն են: Անեզր թախծի սարսուռ է անցնում պատումի էջերով: Պատճառի քննության մեջ հետեւանքը, բանականության վերին խորհրդով, հայտնաբերում է դարերով արմատացած բարքերի կարծրացած բնազդը՝ կնոջ իրավազրկությունը, որ կաշկանդում է մարդու բնական ու ազատ զարգացումը, ողբերգական կացություն ստեղծում նրա համար: Գրողը ցույց է տալիս, որ իր ժամանակի ընտանիքը հիմնված է կնոջ բացահայտ ստրկության վրա(«Անիծած հարսը», «Աղքատի պատիվը», ուր կնոջ պատիվը, արժանապատվությունը վաճառքի է հանվում): Կնոջ երեւութագիտության մի իսկական գյուտ է «Անուշը» պոեմը: Որքան էլ ուժգին է ավանդական կարծրատիպը՝ Անուշի էության մեջ գործում է կինը, կյանքի վայելքի կենսաբանական հաճույքը, երջանկության բնական իրավունքը, որը բուռն ցանկությամբ նրան մղում է Սարոյին միանալու, քանզի դա կամքի յուրատեսակ քննություն է եւ սկզբունքի հաղթանակ:

Կենսաբանական այն բնազդները, որ արթնանում են Անուշի կանացի բջիջներում, ընդգրկում են կնոջ ֆենոմենի գոյապաշտական վայելքի գերակայությունը բոլոր կարգի կարծրատիպային «բարոյական» արժեքների նկատմամբ: Նրա սերը Սարոյի նկատմամբ վերաճում է գոյության բացարձակ նպատակի եւ աշխարհային իմաստի: Այստեղ սակայն ավանդական բարոյականության կարծրատիպի քայքայումը նպատակ չէ, այլ սոսկ վարքի շեղում տիեզերական այն առեղծվածի կողմից, որ կոչվում է կին: Ի՞նչ է կինը Անուշի կերպարով: Բնական մի արարած, որ երջանկության այլ ասպարեզ չուներ, քան սերը եւ սիրած էակի մեջ մարմնավորած աշխարհը, որից դուրս աշխարհը դատարկ է, կյանքը՝ անիմաստ: Բնության եւ բարոյականության բախումն անխուսափելի է, եւ վաղ թե ուշ Անուշը պիտի հայտնվեր այդ բախման հանգույցում եւ առմիշտ

[8] Հայկական նովելներ, Ե., 1971, էջ 93:

վերջակետ դներ երջանկության իր երազանքին, քանզի այդ հասարակության մեջ տեղ չկար անհատի երջանկության համար:

Թումանյանը բացահայտում է զգացմունքի նոր երանգներ. մտերմիկ ու ջերմ անմիջականությամբ հերոսուհին բացում է իր կուսական հոգու անծանոթ ծալքերը՝ ցավոտ երազներ ու մարդկային բարձր մղումներ ծնելով նախապաշարումով կաշկանդված կանանց փակ հոգիների մեջ, ուր բռնադատված կամքը թաքցնում է սիրո անկաշկանդ վայելքի տենչը, որին զուգորդվում է «դարդից չորացած» եւ ուռենի դարձած աղջկա պատմությունը, որ դեռ շարունակում է վշտից դողալ ու արտասվել: Ուռենու մասին գեղեցիկ պատումն ապագա ողբերգության, սիրո անվերադարձ կորստյան կանխազգացման յուրօրինակ խորհրդանիշ է ու զուգահեռ: Վառվելու եւ հուր դառնալու, հալվելու եւ ջուր դառնալու, ի վերջո լացող ուռենի դառնալու չարագուշակ մտքերը խանգարում են անգամ վայելելու սիրած երիտասարդի ներկայությունը: Գեղջկուհի Մանիշակը երազում կանխազգում է Սարոյի վախճանը՝ անտեր մնացած գառների տեսքով, եւ հորդորում է Վարդիշաղին՝ գարի գցելով բախտ բացել եւ մեկնել իր տեսած երազը: Սրանք գործողությունների զարգացման առումով աննշան դեր են կատարում, սակայն մեծ է նրանց նշանակությունը կանխազգացման թեմայի, երազի եւ գուշակությունների մասին ժողովրդական պատկերացումների եւ միջավայրի բացահայտման առումով: Հետամնաց միջավայրի վերաբերմունքը հակասական է իրեն ու իր ադաթներին մարտահրավեր նետած հերոսների հանդեպ: Պոեմի նախերգանքը կանխորոշում է մարդկային գեղեցիկ հոգիների մեծ սիրո դաժան ավարտը: Կանխազգացման թեման ընդլայնում է պոեմի իմաստային-բովանդակային շրջանակները՝ մարդկային նախազգացումները ներկայացնելով նույնքան իրական, որքան կյանքի դեպքերն ու իրականությունը: Թումանյանը կանխազգացումը ներկայացնում է մարդկային հոգու նույնքան կարևոր բաղադրիչ, ինչպես սերն ու ատելությունը, վիշտն ու ուրախությունը և կարծում է, որ նախապաշարումին զուգընթաց գործում են ենթագիտակցությունը եւ խորհրդավոր զգացողությունները («Սասունցի Դավիթ» էպոսում Ձենով Օհանի երազը, որը կանխազգում է եղբորորդու գլխին կախված արհավիրքը՝ Սասնա աստղիկի մարումով): Ինքնակենսագրական նոթերում բանաստեղծը գրում է. «Երազը էնքան վառ ու կենդանի է եղել ինձ համար, որ երբ նայում եմ իմ անցած կյանքին, երազն ու իրականությունը էնքան ուժեղ են իրար հյուսված, որ մեկը մյուսից ես չեմ կարող ջոկել»[9] : «Դեպի անհունը» պոեմում նա ուղղակի բանաձևում է իրականության ու երազի ներդաշնակությունը.

[9] Հովհ.Թումանյան, *ԵԼԺ, հ.8,* Ե., 1997, էջ 430:

Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք:

Շոպենհաուերը գրում է. «Մի՞թե երազ չէ մեր ողջ կյանքը, կա՞ արդյոք ճշգրիտ չափանիշ երազի ու իրականության միջեւ, պատրանքների ու իրական օբյեկտների միջեւ »[10]: Իսկ Զ. Ֆրոյդի դիպուկ բնորոշմամբ՝ երազները via regia՝ «արքայական ճանապարհ» են դեպի մեր անգիտակցականը, դեպի ներքին իրականությունը[11]: Այս ճանապարհով հաճախակի էին անցնում թե՛ ինքը՝ բանաստեղծը, թե՛ նրա հերոսները: Ամենից շատ Անուշի կերպարում են արտահայտված գալիքի ծանր զգացումը, սիրո եւ գեղեցկության կորստյան զարհուրանքը, երջանկության փլուզման, անկման ցավի միանգամայն իրական ապրումները, որոնք մթագնում են ժողովրդական տոների հետ կապված մարդկանց խանդավառությունը՝ պատումին հաղորդելով ողբերգական շեշտ: Այն, ինչ Թումանյանի հերոսուհիները վերապրում են կյանքի էմպիրիկ ընթացքով, իրականում իմաստավորված է փիլիսոփայական հիմնավոր գիտակցականությամբ: «Ազատություն գոյություն չունի, աշխարհում ամեն ինչ կատարվում է ըստ բնության օրենքի»[12՝] հեգելյան այս դրույթը կնոջ կենսաբանությունը գործնական հոգեբանության վերածելու ինչպես զոհրապյան, այնպես էլ թումանյանական արվեստի փիլիսոփայական հիմքն է: Ըստ Շոպենհաուերի՝ պատմությունը խաբկանք է, կյանքը՝ բաց համակարգ, կայուն ոչինչ չկա, չկա նպատակաբանություն, այլ միայն ճակատագրի կույր տարերք[13]: Այս փիլիսոփայությունից է ելնում Թումանյանի աշխարհայացքը: Քանի որ առանց Սարոյի իր գոյությունն անիմաստ է, Անուշի կանացի բնազդը տիեզերքն ամփոփում է ապրած պահերի երջանկության մեջ եւ արարում սիրո ու մահվան մի գեղեցիկ լեգենդ, որ նման է երազ օրերի ռոմանտիկական վերհուշի, եւ իր անիմաստ գոյությունն ավարտում է՝ հավիտենական հանգիստ գտնելով Դեբեդի ալիքների մեջ, ուր ձուլվում են սերը, երջանկությունն ու մահը: Այսպիսով, սեռի պաշտամունքը պոեմում այլաբանվում է կնոջ հոգեկերտվածքի բացահայտման գաղափարով, որով գրողը պարզաբանում է կնոջ ֆենոմենոլոգիան. ոչ միայն ներշնչման աղբյուր, այլեւ բնություն, կենսաբանական էակ, եւ Թումանյանն այս դրույթը հաստատում է առանց ուսուցողակա-

---

[10] А. Шопенгауэр, *Мир как воля и представление*, Собр. соч. в пяти томах, т.I, кн.1, §5, Москва 1992.
[11] Տե՛ս Ֆ. Фрейд, *Толкование сновидений*, Перевод - Я. Коган, Изд. Харвест, Минск, 2005, с. 137.
[12] Հեգել, *Փիլիսոփայության պատմություն*, Ե, 1964, էջ 165:
[13] И. Лапшин, «Артур Шопенгауэр», *Энциклопедический словарь*, Под ред. Брокгауз Ф.А., Ефрон И.А. Том 78, СПб, 1903. Այս մասին տես նաև՝ А. Шопенгауэр, *Мир как воля и представление*, кн.2, §29, ինչպես նաև՝ http://subscribe.ru/archive/socio.science.shopen/201309/04134038.html,

նության ու բարոյաբանության, այլ որպես մետաֆիզիկական վերացարկում, տիեզերական նախաստեղծ արարում:

Առհասարակ կնոջ ֆենոմենը Թումանյանի գեղարվեստական աշխարհայեցության էական բաղադրիչներից մեկն է: «Ի՞նչ է կինը, ի՞նչ արարչություն է նա, եւ ինչպե՞ս գտնել նրա հանելուկային էության բանալիները» հարցերը մշտապես զբաղեցրել են Թումանյանին, նրա սյուժեները լրացրել կնոջ բնույթի տարրալուծման փորձառական ձեւերով: Անուշը որքան հայկական, նույնքան էլ համամարդկային կերպար է, որի զգացմունքը բոլոր ժամանակներում ունեցել է տառապանքի ու հոգեկան լարման ընդհանրություններ բոլոր ազգերի մեջ. նա երկվորյակն է շեքսպիրյան Ջուլիետի եւ Պորցիայի, Գյոթեի՝ անաղարտության, անձնուրաց սիրո մարմնավորում Շարլոտայի եւ Մարգարիտայի, բայրոնյան քնքուշ Մեդորայի ու ազատատենչ, կրակոտ Գյուլնարայի, ռուսական ազգային ոգու գեղեցկությունը՝ անձնազոհության հասնող սերը, բայց եւ պարտականության ու արժանապատվության զգացումը մարմնավորող Տատյանայի: Կա ինչոր հավերժական օրենք՝ թելադրված բնության կողմից, կա աշխարհային կարգ, որ սահման է դնում նրանց կամքին: Ու տխրության, թախծի, կարոտի ու սիրո, հույսի ու հուսաբեկության մթնոլորտում լույս երազներ է ծնում համաշխարհային սիրո եւ հանուր երջանկության փափագը, որ բնական ներդաշնակության է կոչում ողջ մարդկությանը:

Համաշխարհային պոեզիայի մոտիվներից մեկը՝ սեր եւ մահ ներհակությունը արժանանում է ինքնատիպ մեկնության Թումանյանի «Աղջկա սիրտը» լեգենդում: Բոկաչոյի, Սերվանտեսի, Լոպե դե Վեգայի, Շեքսպիրի, Գյոթեի հերոսուհիները պայքարում են դասային անհավասարության դեմ՝ հանուն ազատ ընտրության եւ երջանկության իրավունքի: Բոկաչոյի հերոսուհու՝ Գիսմոնդայի նման Թուումանյանի հերոսուհին եւս հաստատում է, որ մարդիկ բնությունից ծնվում են ազատ եւ հավասար: Ովքեր խախտում են այդ օրենքը, ոտնահարում են բնությունը: Բռնակալ ու անգութ հայրը հրդեհում է աշտարակը՝ փորձելով կրակի բոցերի սաստկության մեջ մարել դստեր հոգում փոթորկվող սիրո հրդեհը.

Բայց սերը որտեղ հրդեհ է ձգել,
Ի՞նչ անի էնտեղ հրդեհը մեկ էլ:
Ու թեժ բոցերի սաստկության միջում
Աղջիկն էրվելով ճչում էր, կանչում.
-Կա թե չկա, նա է, որ նա…

Հերոսուհին հանուն սիրո մահվան դեմ է մաքառում ոչ միայն կյանքում, այլեւ անդրաշխարհում: Հոգու կեցությունը վերաճում է գեղագիտական ֆենոմենի, ուր հոգին միաձուլվում է տիեզերական ներդաշնակության հետ, ուր այնկողմնայինն ու երկրայինը ձուլվում են հավերժականի մեջ, եւ հյուսվում է հավիտենական նորոգության հեքիաթը: Սերը, որպես մարդկային հոգու ֆենոմեն, նորակերտում է կյանքը սիրո աստվածային մաքրությամբ: Ենթագիտակցական աշխարհում միանում են իրականն ու տիեզերականը, և տղան լսում է հանուն սիրո հրդեհում այրված սիրած աղջկա հանձնարարականը.

-Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ,
Էն ծաղկի մեջ իմ սիրտն է, որ կա,
Կարոտ, խենթ սիրտը ջահել աղջկա-
Լիքը սիրով, երազներով…

Երազում «անմեռ աշխարհքից» հայտնված աղջիկը համոզում է սիրած տղային քամել այդ ծաղիկը և խմել նրա հյութը, որը մոռացնել կտա իրեն և իր «հուր սերը», կսփոփի նրա անփարատ վիշտը: Հանուն սիրո մահանալու եւ մահվան մեջ անմահանալու գաղափարը, բնության եւ մարդու մերձեցումը խորհրդանշում է սիրո մի նոր փիլիսոփայություն՝ անցողիկը լուծելով հավերժության գաղափարի մեջ, ուր սիրելու տենչանքներն են թեւածում՝ ավետելով սիրո հաղթանակը մահվան դեմ: «Կյանքի եւ մահվան» թեմայով հարցասիրությունը մեկ անգամ չէ, որ Թումանյանին հասցնում է շեքսպիրյան մենախոսությունների՝ տեսնելով մահվան մեջ կյանք, կյանքի մեջ՝ մահ՝ որպես բնության մշտանորոգ շարժում: Մոխրացած աղջկա երազներով, սիրով լի «խենթ, կարոտ» սիրտը կենդանի է մնում՝ իբրեւ հավերժական սիրո խորհրդանիշ. «Ու միշտ կենդանի սրտից թրթռուն բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն՝ կարմիր, թեթեւ, բայց…սիրտը սեւ…»[14], ճիշտ ինչպես կնոջ ճակատագիրն է, որն ընդգծում է նաեւ Շեքսպիրը («Վեներա եւ Ադոնիս»):

Սիրո մեծ ուժի եւ հավերժության թեման բնության յուրօրինակ փիլիսոփայության հետ է կապվում «Ախթամար» եւ «Փարվանա» լեգենդներում: Ծովային ահեղ տարերքը հաղթահարող պատանու կամ ափին ամեն գիշեր կրակ վառող եւ սիրած տղային սրտատրոփ սպասող Թամարի բանաստեղծական սեղմ նկարագրությունը լավագույն կերպով ընթերցողին է հասցնում զգացմունքի մեծ ու-

[14] Հովհ.Թումանյան, Երեւան 1986, էջ 370:

ժը, սիրո ճանապարհին ամեն մի արգելք հաղթահարելու անդիմադրելի կամքը: Կործանվում է սերը մարդկային չարության պատճառով, բարի ու գթառատ բնությունը հավերժացնում է գեղեցիկ զգացումը՝ այն մնում է ծովի ալիքների հավերժական ծփանքում որպես պատրանք՝ «Ա՛խ, Թամար»: Այս առումով առանձնահատուկ քննության է արժանի «Փարվանա» պատումը: Եթե Թամարի կենսաբանական մղումները հանգում են կյանքն ապրելու, սիրվելու, տրվելու, կին լինելու բաղձանքին, ապա «Փարվանա» լեգենդի արքայադուստրը երջանկության իմաստը որոնում է հոգեկան ու մտավոր իր արժեքների ազատության մեջ: Հերոսուհին ունի ոչ միայն հմայիչ գեղեցկություն, այլեւ բացառիկ խելք, բարոյական կայուն եւ բարձր ըմբռնումներ, արժանապատվության եւ մարդկային կատարելության ձգտում: Նա չի կարող իրեն պատկերացնել գեղեցիկ առարկայի դերում, որը պիտի «նվաճվի» մրցության կամ կռվի միջոցով: Ինչպես Ռաֆֆին, այնպես էլ Թումանյանը կարծում է, որ սերը կարող է լինել միայն հոգիների փոխադարձ կապ եւ միասնական ձգտում: Ահա թե ինչու նա մերժում է ավանդական առաջարկը՝ իր ձեռքի խնձորը մրցության հաղթողին նետելու եւ իրեն փեսացու ընտրելու մասին: Մի՞թե ուժով հաղթելը կամ ճարպկությունը կարող են սիրո իրավունք համարվել: Արքայադուստրը մերժում է նաեւ սերը ոսկով ու շքեղությամբ հատուցելու առաջարկները, որովհետեւ ո՛չ անգին քարերն ու գոհարը, ո՛չ հարստության խոստումները չեն կարող իսկական երջանկության, սիրո գրավական լինել.

Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկնքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի:
Ես նրանից հուր եմ ուզում,
Անշեջ հուրը սրբազան,
Ով կբերի անշեջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան…

Արքայադուստրը կնոջ իդեալատիպ է՝ իրականի եւ վերիրականի մի գեղեցիկ համադրություն, որն իր մեջ պարփակում է սիրո, նվիրումի ու հավատարմության աստվածային առաքինությունը: Կրքերի, ձգտումների երկրային կաշկանդումներից ազատ հերոսուհին որոնում է անհասանելին, բացարձակը, հոգու

հաղթանակը: Ըստ էության նա զտված է դասային պատկանելության հոգեբանական բարդույթից եւ նույնացված է գաղափարական խորհրդանիշի հետ:

Անշեջ հուրը, որի երազանքով է ապրում հերոսուհին, մարմնավորում է հավերժական, անբասիր ու անդավաճան սիրո իդեալը: Վեհ ու գեղեցիկ է սերը, բարի է ու ստեղծող, եթե ունի դրական սկիզբ, եւ ընդհակառակը, արատավոր ու բնազդական է այն, երբ բխում է կրքերի մղումներից, բարոյական մեղանչումից: Շեքսպիրի հերոսուհին՝ լեդի Աննան («Ռիչարդ Երրորդ») թուլություն է, որին տիրանում է Ռիչարդը «յուր սրտի ահեղ ատելության մեջ»: Աննան իր վարքագծի գլխավոր պատճառը համարում է իր «կանացի սիրտը»: Համլետին ապշեցնում է մոր վարմունքը, որ հավատարմության, նվիրվածության, հավերժական սիրո ինչպիսի խոսքեր է շռայլել ամուսնուն, եւ այնքան արագ, դեռ սգո արցունքները չցամաքած՝ ամուսնանում է իր ամուսնուն սպանողի հետ, եւ Համլետն այդ բացատրում է երեք բառով՝ «Թուլությո՛ւն, անունդ կին է»: Օֆելյան եւս դառնում է չարիքի ակամա դաշնակից, պալատական որոգայթների կույր գործիք: Շեքսպիրյան Գերտրուդի, Օֆելյայի, Լեդի Աննայի նման թուլություն է նաեւ Թմկաբերդի տիրուհին, որի հոգում հաղթում է փառասիրությունը: Չէ՞ որ, ինչպես հաստատում է անմահ Ֆիրդուսին, կինը կարող է ոչ միայն ոգեշնչել, անհաղթ ուժ տալ հերոսին, այլեւ կործանել նրան:

Թմկա տիրուհու հոգում եւս արտահայտված է մարդկային բնույթի այն առանձնահատուկ վիճակը, երբ բարուց չարին անցման սահմանագիծը դառնում է անորսալի: Կնոջ առեղծվածային կերպարում, Շեքսպիրի պես, Թումանյանն առանձնացնում է երկու զորեղ, բայց իրարամերժ ուժ՝ աստվածայինը եւ սատանայականը: Յագոն Օթելլոյին կործանելու համար կործանում է նրա հոգեկան ներդաշնակությունը՝ առաքինության, բարության, հոգեկան գեղեցկության իսկական տիպարին՝ Դեզդեմոնային: Նույն ձեւով է շահը հաղթում անպարտելի Թաթուլին՝ դիպչելով նրա միակ խոցելի տեղին՝ նրա ուժին եւ թուլությանը, նրա «աքիլլեսյան գարշապարին»՝ գրավելով ծով աչքերով եւ բարձր Աբուլի գագաթը ծածկող ձյունից էլ ավելի ճերմակ ճակատով Ջավախքի դստեր սիրտը, որը Թաթուլի հոգին ու շունչն է, հոգեկան ներդաշնակությունը, նրա հաղթանակների աղբյուրը, մարդկային գեղեցկության եւ կատարելության բարձրագույն դրսեւորումը: Թմկա տիրուհու կանացի գերզգայական հրապույրները՝ իրենց անմեկնելի գաղտնիքներով, ուժ են տալիս Թաթուլին, ողողում կյանքի հավերժացման լույսով: Օթելլոն եւ իշխան Թաթուլը անպարտելի մնացին որպես մեծ զորավարներ, բայց դյուրությամբ չարիքի զոհ դարձան որպես ազնիվ մարդիկ: Եղծվում է գեղեցկությունը՝ խաթարելով հոգու նիրվանան: Թաթուլի երազում կինը ե՛ւ բեր-

դը պատած վիշապ օձի տեսքով թշնամի հրեշն է, ե՛ւ նազելի կնոջ փոխարեն կրծքին ծանրացած օձի գլուխը: Ողբերգության կանխազգացմանն անմիջապես հաջորդում է իրական աղետը: Երազ-տեսիլը ձուլվում է դաժան դավ-ոճիրների պատկերների շարքին: Թումանյանի համար «բնազդը»՝ ինտուիցիան դառնում է մշտական գեղագիտական սկզբունք եւ հավատամք: Թմկա տիրուհին սեփական խղճի դատաստանի առջեւ՝ այսպիսին է հերոսուհու կերպարի զարգացման հետագա ընթացքը: Անցնում է դավաճանության պահը: Ավերակ բերդի եւ նահատակված քաջերի դեմ կանգնած գեղեցկուհին սոսկումով է նայում իր կատարած չարիքի հետեւանքներին, զգում է ամոթ ու խղճի խայթ, անդարձ կորցրած երջանկության համար թախիծ ու ափսոսանք եւ խոր արհամարհանքի ու անթաքույց ատելության խոսք է նետում շահին.

Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

Առաքինի, խիզախ Թաթուլից հետո Թմկա տիրուհին չէր կարող նետվել մի գարշ, խարդախ, ստոր սրիկայի գիրկը: Նա, ինչպես Շանթի հերոսուհին՝ Անանն («Ինկած բերդի իշխանուհին»), չէր կարող իշխանությունն ու փառքը կիսել անարժան մարդու հետ: Նա մեծ է եւ ուժեղ իր թուլության մեջ, որովհետեւ հոգով ուժեղ կին է ու իր անկման մեջ անգամ ավելի բարձր է, քան կնոջ մատնությամբ ամրոցին տիրացած շահը: Մեղքի մեջ անգամ՝ չափազանց հզոր, առնական կին եւ ինչպիսի ողորմելի տղամարդ՝ պյուռոսյան հաղթանակով:

Առեղծվածը մնում է առեղծված, եւ գրողը բնավ չի փորձում ամեն ինչ ճանաչելի դարձնել սովորական ու վերջավորված ճշմարտությունների իմացությամբ: Մի ամբողջ տիեզերք է Թումանյանի պատկերած կանանց աշխարհը: Եվ այդ աշխարհն ունի իր փիլիսոփայությունը՝ անհատի եւ հասարակության, սիրո եւ երջանկության, կյանքի ու մահվան փիլիսոփայական ընթերցումներով եւ հոգեբանական լուծումներով: Թումանյանի մարդաբանական ընկալումների հիմքում ընկած են կնոջ անհատականության սկզբունքի եւ զգացմունքների ազատության խնդիրները: Նրա շատ հերոսուհիների ըմբռնումով՝ սերը եւ զգացմունքի ազատությունը բարձրագույն ճշմարտություն են, այդ պատճառով էլ նրանք չեն ճանաչում ոչ մի արգելք, որ իրենց առջև դնում են հասարակական պայմանադրականությունը եւ կարծրատիպային հարաբերությունները: Յուրաքանչյուր

անհատ մի առանձնահատուկ բարոյական արժեք է, մարդկային բնության եզակիորեն խիստ եւ որոշակի արտահայտություն: Կինը ծնում է կյանքը. կանացիությունը արարման խորհրդանիշն է. «Մեզ վեր է հանում հավերժ կանացին…

Եղիր պաշտպան, եղիր վահան,
Թագուհի՛, մա՛յր և կույս»[15] :

Այս տողերով է ավարտվում Գյոթեի «Ֆաուստը»:

Անուրջների աշխարհից Թումանյանը վերադարձավ մարդկանց առօրյա աշխարհը՝ կերտելով հախուռն կրքերով համակված բնավորություններ՝ իբրեւ դաժան իրականության մեջ ծնված առաքինության ու գեղեցկության երազանք: Թումանյանի մարդասիրությունը սահմաններ չի ճանաչում: Ավետիս Ահարոնյանի որդին՝ Վարդգես Ահարոնյանը գրում է. «Իսկ կյանքի մեջ մարդը գերագույն արժեքն է մեր բանաստեղծի համար: Չկա որևէ արժեք, որ կարելի չլինի զոհաբերել մարդուն»[16]:

[15] Գյոթե, Յոհան Վոլֆգանգ ֆոն, *Ֆաուստ, մաս 2,* Ե, 1963 , էջ 420:
[16] Ահարոնյան Վ., *Հովհաննես Թումանյան, Մարդը եւ բանաստեղծը*, Բոստոն, 1936, էջ 304:

## Ամփոփում

ГЕРОИНИ ТУМАНЯНА В ТРАГИЧЕСКИХ УЗЛАХ СТОЛКНОВЕНИЯ ЕСТЕСТВЕННОГО ПРАВА И ТРАДИЦИИ.

**Анжела Калоян**

*Доктор филологических наук*

В творчестве Туманяна сгустились самые высокие и светлые гуманистические устремления литературно-культурного развития, мечты - увидеть человека совершенным. В мире Туманяна женщине отведено особое место. Она изображена с характерной туманяновской широтой, философской глубиной и размахом. Это причудливое психологическое сплетение любви, страдания и счастья, жизни и смерти. Это своеобразное столкновение и борьба прошлого и настоящего, обыденного и возвышенного, права и патриархального обычая. В основе гуманистических воззрений Туманяна лежат принципы индивидуальности и свобода чувств женщины. Многие его героини не признают запреты и веления обычаев, выбирают путь свободы, даже если за это должны поплатиться жизнью.

TUMANYAN'S HEROINES IN THE TRAGIC JUNCTIONS OF NATURAL RIGHT AND TRADITIONAL WAY OF LIFE

**Anzhela Kaloyan**

*Doctor of Philology*

Tumanyan's heroines struggle for their personal happiness rejecting traditional way of life. This struggle doesen't succeed all the time, nevertheless they bravely challenge the life, and affirm their natural right for personal happiness. Tumanyan was endowed with an intuitive perception of the phenomena of life and their cause-effect relationship. Tasks related to the psychological characteristics of the great national poet still remain outside of purview of scholars-both literary critics and psychologists. The poet was granted with the gift of clairvoyance, and intuition, and with bright imagination, and highly developed intellect, which allowed him not only to feel, but also to underestand the general principles of existence and development of events.